«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
“ROAD DEPARTMENT” FUND

ՀՀ, Երևան 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
Հեռ. +374 (10) 511-391, էլ. փոստ՝ info@armroad.am
Government House 3, Yerevan 0010, Republic of Armenia
Tel.: +374 (10) 511-391, e-mail: info@armroad.am

**N ՃԴ/01/05/950-2024**
**13.03.2024թ.**

**Hetq.am-ի լրագրող**

**Տիրայր Մուրադյանին**

Հարգելի՛ Տիրայր Մուրադյան,

05.03.2024թ. Ձեր հարցմանն ի պատասխան՝ տեղեկացնում ենք՝

- Վարկային և դրամաշնորհային ծրագրերով 2018-2023թթ. ճանապարհահատվածների հիմնանորոգման, նորոգման, կառուցման, վերակառուցման, վերականգնման և բարելավման աշխատանքներ են տարվել շուրջ 55 պայմանագրերի շրջանակներում: Պայմանագրերով նախատեսված աշխատանքների նկատմամբ ամենօրյա հսկողությունն իրականացվել է տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունների, իսկ պայմանագրերի կառավարումը՝ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կողմից: Շինարարական աշխատանքների համապատասխանության հնարավոր խնդիրների, նախագծային շեղումների, արձանագրված թերությունների և հետագայում դրանց վերացման հետ կապված հարցերը կրել են աշխատանքային բնույթ, և նշված դեպքերի համար կիրառվել են պայմանագրային համապատասխան կարգավորումներ:

- Բոլոր ճանապարհահատվածները շահագործման են հանձնվել կատարված աշխատանքները պայմանագրին և նախագծանախահաշվային փաստաթղթերին համապատասխանելու դեպքում:

- Ծրագրերի շրջանակներում կապալառու կազմակերպությունները հիմնականում օգտվել են լաբորատոր փորձարկումներ իրականացնող հետևյալ կազմակերպությունների ծառայություններից՝
  - ✓ «Շինսերտիֆիկատ» ՍՊԸ
  - ✓ «Փ. Աբաջյան» ՍՊԸ
  - ✓ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ, լաբորատորիա
  - ✓ «Արցախճան» ՓԲԸ
  - ✓ «Ճաննախագիծ» ինստիտուտ ՍՊԸ
  - ✓ «Հորիզոն-95» ՍՊԸ
  - ✓ «Պռոլաբ» ՍՊԸ
  - ✓ «Ա և Լ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ» ՍՊԸ

- Հ-17, Մ-5 – Արմավիր – Մ-9, կմ3+310 – կմ3+963 և կմ7+750 – կմ8+805 ճանապարհահատվածների վթարավտանգ տեղամասերի բարելավման աշխատանքների արդյունքում ավարտված շինարարական օբյեկտը շահագործման է հանձնվել 04.04.2023թ.: Այդ պահին օբյեկտում թերություններ չեն հայտնաբերվել, ինչը փաստվել է օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտով: Կապալառու կազմակերպության հետ կնքված պայմանագրի համաձայն, օբյեկտը գտնվում է թերությունների համար սահմանված պատասխանատվության ժամկետում (երաշխիքային ժամկետ, ավարտը՝ 04.04.2024թ.), որի ընթացքում օբյեկտի առկա վիճակն ուսումնասիրելու նպատակով թե՛ պատվիրատուի և թե՛ տեխնիկական հսկողություն իրականացրած կազմակերպության կողմից պարբերաբար կատարվել են տեղամասային ստուգայցեր: Այցելություններից մի քանիսի ընթացքում հետագայում հայտնաբերվել են հետևյալ հիմնական թերությունները՝
  - ✓ որոշ տեղամասերում ասֆալտբետոնե պատվածքի լայնական, երկայնական և ցանցաձև ճաքեր, ինչպես նաև նստվածքներ,
  - ✓ նշագծման մասնակի մաշվածություն:

Արձանագրված թերությունների և դրանց վերացման վերաբերյալ կապալառու կազմակերպությանն ուղարկվել են ծանուցումներ, տրվել են համապատասխան հրահանգներ: Չնայած որ կապալառու կազմակերպությունը կատարել է թերությունների

վերացման հետ կապված աշխատանքներ, այնուամենայնիվ, դրանք ամբողջությամբ դեռևս վերացված չեն եղանակի պատճառով:

Հարկ է նշել, որ պայմանագրի համաձայն, թերությունների վերացման համար սահմանված պատասխանատվության ժամկետը կարող է երկարաձգվել այնքան, որքան անհրաժեշտ է բոլոր թերությունների վերացման համար: Մինչև նշված ժամանակահատվածի ավարտը կապալառուի կողմից թերություններն ամբողջությամբ չվերացնելու դեպքում պատվիրատուն կարող է կիրառել նաև հետևյալ պատասխանատվության միջոցները՝

- ✓ կկատարվի հաշվարկ և Կապալառուին կներկայացվի թերությունների վերացման համար պահանջվող ծախսերի վճարման պահանջ,
- ✓ կներկայացվի բանկի կողմից տրված բանկային երաշխիքի վճարման պահանջ,
- ✓ պատվիրատուի կողմից կլուծվի պայմանագիրը (թերությունները չուղղելը կդիտվի պայմանագրի էական խախտում):

- Հաշվի առնելով, որ խնդիրների առաջացման պատճառները տարբեր են՝ արտաքին ազդեցություններից մինչև որակի հետ կապված հնարավոր խնդիրներ (որոնք աշխատանքների ընդունման պահին տեսանելի չեն), որոնց հետ կապված վերջնական եզրակացության հանգելու համար անհրաժեշտ են տարբեր միջոցառումներ (ակնադիտական ուսումնասիրություններ, գործիքային ստուգումներ, այլ տեսակի մշտադիտարկումներ), այս պահին վերջնական գնահատականներ տալուց ձեռնպահ կմնանք:

**Հարգանքով՝**

3/13/2024

X

ԳՈՌ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Signed by: AVETISYAN GOR 2810880492

**Գործադիր տնօրեն Գ. Ավետիսյան**

*Կազարողներ՝ Մ. Կիրակոսյան, Լ. Գրիգորյան*
*«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ*
*Հեռ.՝ 010 511391 (281)*
*Էլ. փոստ՝ lilit.grigoryan@armroad.am*